ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2022/75

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը
2022 թվականի հոկտեմբերի 10-ի N 75

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը, հիմք ընդունելով «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Տավուշի Պատրիկ Տէվէճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամի վերակազմավորելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 14-ի թիվ 1086-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձնաց պետական ռեգիստրում «Տավուշի Պատրիկ Տէվէճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամի 2022 թվականի սեպտեմբերի 16-ին գրանցված կանոնադրությունը,

որոշում է.

1. Հավատարմագրման հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 21-ի N 70 որոշմամբ շնորհված ինստիտուցիոնալ հավատարմագրման վկայականը տալ «Տավուշի Պատրիկ Տէվէճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամին որպես «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2022 թ. հոկտեմբերի 10
ք.Երևան

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2022/70

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
21 հուլիսի 2022 թ. N 70

ՏԱՎՈՒՇԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, Նալբանդյան 5

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2022թ. հուլիսի 21-ին քննարկեց Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջի (այսուհետ՝ ՏՏՊՔ, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	17 փետրվարի 2021 թ.
ինքնավերլուծության ներկայացում	8 հունիսի 2021 թ.
փորձագիտական այցի իրականացում	18-21 հոկտեմբերի 2021 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	29 դեկտեմբերի 2021 թ.

թերությունների վերացման ծրագրի ներկայացում	15 փետրվարի 2022 թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 3-ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Որակի ներքին ապահովման համակարգ»,** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. **Քոլեջը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում**

ՏՏՊՔ-ի ՄԿԾ-ները համահունչ են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների և ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Քոլեջում գործում են ինչպես նախկինում իրականացվող, այնպես էլ նոր ներդրված՝ պահանջված և նորարարական մասնագիտություններ:

Նոր ժամանակակից կրթական ծրագրերի ներդրման արդյունքում ակտիվացել է քոլեջ-գործատու կապը, որի արդյունքում մշակվել են երկու մասնագիտության դուալ կրթական ծրագրեր: ՄԿԾ-ները և ուսումնական պլանները վերամշակվել են քոլեջի կողմից՝ գործատուների ակտիվ ներգրավմամբ, հաշվի են առնվել գործատուների որոշ պահանջներ, ավելացվել են գործնական պարապմունքների ժամերը:

Գործատուներն աջակցում են ՏՏՊՔ-ին պրակտիկայի կազմակերպման և գործնական ժամերի իրականացման գործընթացներում:

Դուալ կրթական ծրագրի ներդրման շնորհիվ ձևավորվել են հմտությունների և կարողությունների գնահատման միասնական մոտեցումներ, որոնց արդյունքում ստեղծվել են անհատական օրագրեր՝ ուսանողների անհատական փաթեթներ/պորտֆոլիոններ:

ՄՈՒՀ-ում կարևորվում է ինտերակտիվ մեթոդների կիրառումը ուսումնական գործընթացում, սակայն դրանց ընտրության և տեղայնացման քաղաքանություն առկա չէ:

Քոլեջում կան բենչմարքինգի և կրթական ծրագրերի մշտադիտարկման որոշակի մեխանիզներ. որոշ ՄԿԾ-ներ համադրվել են նմանատիպ այլ ծրագրերի հետ, սակայն հիմնական մշտադիտարկումները և բարեփոխումները վերաբերում են միայն դուալ կրթական ծրագրով ներդրված կամ նման ձևաչափով իրականացվող մասնագիտությունների ՄԿԾ-ներին: Արդյունքում, ՏՏՊՔ-ում մշտադիտարկման մեխանիզմները համակարգված չեն և ինստիտուցիոնալ առումով չեն գործում բոլոր մասնագիտությունների համար:

ՏՏՊՔ-ն կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն, կայուն դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, մասնագիտական գործունեության նկատմամբ որոշակիորեն հստակեցված պահանջներ, երիտասարդ կադրերի ներգրավման քաղաքականություն:

ՄՈՒՀ–ում աշխատում են ինչպես երկարամյա աշխատանքային փորձ ունեցող հմուտ դասավանդողներ, այնպես էլ երիտասարդ կադրեր, որոնք հիմնականում տեսական դաշտից են: ՏՏՊՔ-ի դասախոսական անձնակազմը մասնակցում է մեթոդական մի շարք վերապատրաստումների, սակայն մասնագիտական վերապատրաստումներին մասնակցությունը սակավ է: Քոլեջն ունի դասախոսական կազմի վերապատրաստումների և կատարելագործման խնդիր:

Ընդհանուր առմամբ ՏՏՊՔ-ի ռեսուրսները ներկա պայմաններում ապահովում են կրթական ծրագրերի իրականացումը, ստեղծված է ապահով և անվտանգ միջավայր ուսումնական գործընթացի կազմակերպման համար:

Քոլեջում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազա: ՄՈՒՀ-ը կարողանում է գտնել նաև դոնոր կազմակերպություններ, ներդրողներ ռեսուրսային բազան համալրելու նպատակով, սակայն ռեսուրսային բազան համալրելիս ոչ միշտ է հաշվի առնվում տարածաշրջանի և շահակիցների կարիքները:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում է, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

ՏՏՊՔ-ի գործունեությունը, ընդհանուր առմամբ, համապատասխանում է միջին մասնագիտական ոլորտին, համապատասխանում է ՈԱՇ-ին, առաքելությունը, նպատակները և խնդիրները մասամբ արտահայտում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Քոլեջում դեռևս արմատավորված չէ ռազմավարական կառավարումը: Կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունը համակարգված չեն: Բացակայում է գնահատման առանցքային ցուցանիշների և արդյունավետության ցուցիչների վրա հիմնված ռազմավարական կառավարումը: Քոլեջը չունի տվյալների հավաքագրման համակարգված մեխանիզմներ և քաղաքականություն: Որոշումներն ընդունվում են իրավիճակային գնահատմամբ՝ առանց տվյալների հավաքագրման կայուն մեխանիզմների կիրառման: Քոլեջում գործընթացները չեն իրականացվում որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում է, ներդրվել են որակի ապահովման աշխատանքները կանոնակարգող փաստաթղթեր:

3. *Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորումների արժանահավատ շնորհմանը.*

ՏՏՊՔ-ում սահմանված չեն հետազոտական հավակնություններն ու նպատակները:
ՄՈՒՀ-ում ձևավորված չէ հետազոտական, ստեղծագործական միջավայր: Դասախոսական և ուսանողական կազմին հետազոտական աշխատանքներում ներգրավելու համար առկա չեն խրախուսման մեխանիզմներ: Լիարժեք փոխկապակցված չեն հետազոտական և ուսումնական գործընթացները, չի իրականացվում նաև դրական փորձի ուսումնասիրություն և տարածում:

Քոլեջը ներգրավված է միջազգային ծրագրերում, կարողացել է այդ ծրագրերի շնորհիվ զարգացնել իր նյութատեխնիկական բազան և բարելավել կրթական ծրագրերը: Ուսանողների և դասախոսների շարժունություն չկա:
ՏՏՊՔ-ն համագործակցում է տարածաշրջանային մի շարք կազմակերպությունների հետ, որոնք աջակցում են ստեղծելու բարենպաստ կրթական միջավայր:
Համագործակցության արդյունքում ձեռք են բերվել կրթական ծրագրերի արդիականացման, պրակտիկաների անցկացման, ինչպես նաև գործատուների հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացման հնարավորություններ:

ՏՏՊՔ-ն համագործակցում է նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հետ, համագործակցությունը հնարավորություն է ստեղծում քոլեջի շրջանավարտների համար ուսումը շարունակել բուհում: Բացի այդ համալսարանի մասնագետները համագործակցում են քոլեջի հետ մոդուլային ծրագրերի փոխհամաձայնեցման և վերամշակման աշխատանքներում՝ տրամադրելով մեթոդական և մասնագիտական օգնություն ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու համար:
Քոլեջում գործում են դիմորդների հավաքագրման մեխանիզմներ: Ընդունելության վերաբերյալ տեղեկատվության տարածման և մասնագիտական կողմնորոշման նպատակով այցելում են դպրոցներ՝ ներկայացնելով քոլեջի մասնագիտությունները և կարիերայի հնարավորությունները, անցկացվում են բաց դռների օրեր: ՄՈՒՀ-ում կան ուսանողների կարիքների վերհանման որոշակի մեխանիզմներ, իրականացվում են կարիերային նպաստող որոշ ծառայություններ՝ ոչ ֆորմալ դասընթացների միջոցով ուսանողները տիրապետում են մրցունակ ինքնակենսագրական կազմելու պահանջներին, գործատուների որոնմանը, գործատուներին ներկայանալուն, աշխատանքային կայքէջերում տեղեկատվություն փնտրելուն և այլն, գործում է ուսանողների իրավունքները ներկայացնող կառույց:
ՏՏՊՔ-ում որոշակիորեն ձևավորված է ներքին և արտաքին հաշվետվողականության համակարգ: Հաշվետվությունները ներկայացվում են ըստ կառուցվածքային ենթակայությունների, սակայն հաշվետվություններում բացակայում է վերլուծական բաղադրիչը:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, հիմքեր ստեղծված են բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն ըստ էության ներառում է փորձագետների կողմից տրված հիմնական խորհրդատվությունները: Ծրագիրը իրատեսական է, իրականացման դեպքում կբերի որակական բարելավումների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4/չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»,** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,
3. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի որակական և քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - ամփոփիչ ատեստավորման անցկացման ձևի վերանայմանը,
   - դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի և կայունության ապահովման հստակ մեխանիզմների կիրառմանը,
   - առկա ռեսուրսային բազայի նպատակային և արդյունավետ օգտագործմանը,
   - տվյալների հավաքագրման, արդյունքների վերլուծման և դրանց կիրառմանը որոշումների կայացման գործընթացում,
   - հետազոտական բաղադրիչի ներդրման և հետազոտության խրախուսմանը,
   - հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցմանը, գործնական հմտությունների ձեռքբերմանը,
   - որակի մշակույթի ձևավորմանը և շարունակական զարգացմանը, քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը,
   - միջազգայնացման և արտաքին կապերի զարգացմանը,
   - ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը:
4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Ա. Սաղյան**

2022 թ. օգոստոսի 19

ք.Երևան